

Մ.Հ.Ս.Հ.Կ.



C.A.R.P.S.

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՁՐՅԱ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՐՇԱՎ
15-23 հուլիսի, 2015թ**

Սևանա լճի ստորջրյա ավազանի հերթական վեցերորդ գիտահետազոտական արշավը կիրականացվի 2015թ.-ի հուլիսի 15-ից 23-ն ընկած ժամանակահատվածում : Գիտարշավների արդյունքները բավականին հուսադրող են հայ գիտնականների համար : Ֆրանս-հայկական այս առաքելությունը իրականացվում է ծրագրի երկու պատասխանատուների՝ Կլոդ Թուլումջյանի (նախաձեռնող), Ստեփան Կոչայանի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային կից գիտահետազոտական ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի դասախոս-գիտաշխատողների, ինչպես նաև Բնապահպանության նախարարության և որոշ պետական մարմինների, այդ թվում՝ «Սևան Ազգային պարկի» սերտ համագործակցությամբ, որոնք աշխատում են Սևանա լճին առնչվող հարցերի շուրջ:

2012թ-ից սկսած այս գիտարշավները իրականացվում են Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՄՀՍՀԿ) պատասխանատվության ներքո : Հայկական այս կազմակերպությունը հիմնադրվել է 2011թ-ի վերջին՝ նախագահ Կլոդ Թուլումջյանի և փոխնախագահ Արա Ավագյանի ղեկավարությամբ (ՄՀՍՀԿ-ի հիմնախնդիրները ներկայացվում են հավելյալ փաստաթղթով) : Գիտարշավներն իրականացվում են ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ : ՄՀՍՀԿ-ը միակ ակումբն է Հայաստանում, որը հիմնականում զբաղվում է ստորջրյա սուզումներով և նպատակաուղղված է զարգացնել այս ոլորտը Հայաստանում :

Այս տարի գիտարշավի նպատակն է ընդլայնել ստորջրյա հետազոտությունների շրջանակը դեպի դեռևս չբացահայտված վայրեր : Հիշեցնենք, որ մինչ օրս Սևանա լճի մեծ մասն ուսումնասիրված չէ սուզորդների կողմից : Մյուս նպատակն է www.sevanlalke.am ինտերնետային կայքի համար ձեռք բերել Սևանա լճի և նրա վտակների բուսական և կենդանական աշխարհը ներկայացնող ստորջրյա լուսանկարներ և տեսանյութեր : Այս ծրագիրն իրականացվում է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության նախաձեռնությամբ «Ինստիտու ֆրանսե»-ի և «Կազա» կեզմակերպության հետ համագործակցության շրջանակներում :

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՍՀԿ)

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742

Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742

Մ.Հ.Մ.Հ.Կ.



C.A.R.P.S.

Ձեռք բերված բոլոր տարրերը (լուսանկարներ, տեսանյութեր և նմուշներ) կտրամադրվեն հայ գիտնականներին՝ հետագա հետազոտությունների նպատակով: Դրանց ուսումնասիրության արդյունքները անմիջականորեն կապված են քաղցրահամ ջրի այս ջրավազանի էկոլոգիական հավասարակշռության հետ, որն ունի ազգային, ինչպես նաև տարածաշրջանային մեծ ռազմավարական կարևորություն ամբողջ Կովկասի համար:

Հետագայում ձեռք բերված տեղեկությունները թույլ կտան իրազեկել տեղի ազգաբնակչությանը Սևանա լճի մասին՝ շնորհիվ հաղորդումների և մեր ծրագրին աջակցող՝ «Սևան Ազգային պարկին» տրամադրվող համապատասխան նյութերի :

Հայաստանում ստորջրյա սուզումները խրախուսելու նպատակով ՄՀՄՀԿ-ն հրավիրում է բոլոր ցանկացողներին կատարել սուզորդային «մկրտություն» Սևանա լճում շաբաթ և կիրակի օրերին, ժամը 13-ից 17-ը: Սուզման առաջին փորձը, որն ի դեպ անվճար է, ունի նախապայմաններ: Քանի որ մասնակցության տեղերը սահմանափակ են, ուստի անհրաժեշտ է նախապես գրանցվել stephane.kojayan@hotmail.fr էլեկտրոնային հասցեով՝ նշելով ազգանունը, անունը, ծննդյան ամսաթիվը, հասակը, քաշը, կոշիկի չափսը և հեռախոսահամարը: Կրնդունվեն միայն առաջին 20 դիմողները: Յուրաքանչյուր թեկնածու նույն օրը կանցնի թեստավորում և կլողա 50մ հեռավորության վրա լաստերով, դիմակով և շնչառական ապարատով, որոնք տեղում կտրամադրվեն անհրաժեշտության դեպքում :

Գիտարշավի ավարտին տեղի կունենա մամլո ասուլիս, որի ընթացքում կամփոփվեն ձեռք բերված նախնական արդյունքները :

Տեղեկությունների համար դիմել՝

Էլլինա Հովսեփյան – ellina_99@yahoo.fr
Արա Ավագյան (+374) 093.13.19.80 – avagn@yahoo.fr
Ստեփան Կոջայան (+374) 098.42.39.58 – stephane.kojayan@hotmail.fr
Կլոդ Թուլումջյան (+374) 098.695.622 – touloumdjian.cl@wanadoo.fr

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742

Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742